

2008

Անհայտ երկրի պատմություն Մուքրիա



Ղազարյան Գևորգ

ԵՐԵՎԱՆ

Անհայտ երկրի պատմություն Մութրիա

Հայկական թագավորության հիմքը

Մենագրություն: Ղազարյան Գևորգ

Նախաբան

Այս մենագրության մեջ ես ցանկանում եմ , Ձեզ ծանոթացնել Մ.Թ.Ա. 13-6դ.դ.ների հայաստանի քաղաքական , ռազմական և այլն փաստերին, և կատարել որոշակի ենթադրություններ, մասնավորապես վերաբերող, հայերի /արմենների/ թագավորության տեղադրությանը, նրանց տարածման խնդրին, և մի շարք այլ հուշագրավ հարցերի վրա, որոնք հսկայական նշանակություն ունեն հայերի` մեր ծագումը բացատրելու համար :

Ես փորձեցի հասկանալ այն ընդհանուր դրությունը, որը կարող էր ազդեցություն թողնել, այն ժամանակ ազգերի ապագայի վրա, որը վերաբերում է հատկապես հայերին: Չնարավոր է , որ ես բաց եմ թողել բազմաթիվ կարևոր նյութեր, նոր տեսակետներ և այլն, որոնց պատճառով կարող եմ ցույց տված լինեմ սխալներ իմ վերլուծության մեջ: Սակայն կցանկամ նշել իմ ընթերցողին, որ ես այս աշխատանքը կատարել եմ հիմնվելով միջազգային, կամ համահայկական հարգանք վայելող հեղինակների, պատմաբանների և պատմիչների գործերի վրա, որոնց թիվը անցնում էր 3 տասնյակը: Ես չեմ ցանկանում պնդել , թե գրել եմ միայն իմ հետաքրքրության համար և զբաղվել ինքնաբավարարմամբ: Ես ենթադրում եմ Ձեր կողմից այնպիսի ուշադրություն , ինչպիսին կակնկալեր յուրաքանչյուր հարգված պատմաբան :

Չուսով եմ , որ այս գրքում բերված իմ բազում ենթադրություններից գոնե մի քանիսը ճիշտ կգտնվեն, և դա կօգնի հետագայում հայագիտության մեջ ավելի մեծ հաջողությունների հասնել մյուսներին, որոնք կհենվեն այս աշխատանքի վրա , որպես արժեք ներկայացնող մի գործի:

Իմ այս փորձին խնդրում եմ վերաբերվել ամենայն լրջությամբ, այնպես ինչպես ես եմ մոտեցել այս մի քանի տարիների ընթացքում երբ աշխատում էի այս մենագրության վրա: Այն ինձանից խլել է իմ երիտասարդության գրեթե ամբողջ ազատ ժամանակը, ընդհանուր առմամբ 2 տարի: Եվ , ահա Ձեր առջև այն է , ինչ իմ համար ունի մեծ կարևորություն ...

Հեղինակ` Ղազարյան Գևորգ 27.03.07թ.

Ընդհանուր փաստեր վերաբերող հայաստանի արևմտա-
հարավային շրջաններին Մ.Թ.Ա 13-9 դ.դ.ներին

Ես երկար էի մտածում, թե որ ժամանակաշրջանից սկսեմ իմ աշխատությունը ավելի մանրամասնությամբ Ձեզ այնժամ տիրող իրավիճակին ծանոթացնելու համար: Ես կանգ առա Մ.Թ.Ա. 13-րդ դարի կեսերի վրա, և ահա թե ինչու:

Այս ժամանակաշրջանը առանձնացավ նրանով, որ մի քանի նախկինում հզոր երկրներ կամ փլուզվեցին, կամ էլ դրա եզրին էին, բացի դրանից, այս շրջանը աչքի է ընկնում ազգերի խոշոր տեղաշարժերով, գաղթերով և այլն: Այս իրադարձությունները իրենց հետքերը թողեցին նաև Հայկական լեռնաշխարհի և հատկապես մի քանի տարածքների պատմության վրա: Քանի որ այս մենագրությունը վերաբերում է հայկական լեռնաշխարհի հրվարկման հատվածում ապրած ցեղային միություններին, և ձևավորվող և , կարելի է նաև ասել ձևավորված պետություններին, ապա պարզ է դառնում , որ մեր ուշադրության կենտրոնում լինելու է հենց այս հատվածը: Այսպիսով ի ՚նչ էր տեղի ունենում : Հայաստանի այս շրջանում մեծ էր հատկապես Ասորեստանի ազդեցությունը, որի արքաները ամեն ինչ անում էին տարածաշրջանը իրենց գերիշխանության տակ պահելու համար: մեջ եմ բերում Ասորեստանի արքա Թիկուլտր-նինուրտայի /Մ.Թ.Ա.1234-1194/ արձանագրությունից մի հատված՝ թվագրվող նրա թագավորության հենց նար թագավորության առաջին տարով.

<<...Իմ թագավորության սկզբում իմ իշխանության առաջին տարում իմ ձեռքը խոնարհեցրեց կուտիներին, ուկումունիներին, Էլիշխան, Շարնիդան, Մեհրին երկրներին: Այդ ժամանակ Բաբխի, Կադմուխի, Պուլլի, Մումմի, Ալգի, Մադունի, Նիխանի, Ալայա, Տիբուրգի, Պարագումգի երկրները ամբողջ լայնածավալ երկրները շուբարիների ես հրի մատնեցի: Թագավորներին նրանց տիրակալներին, իմ ծնկի առաջ խոնարհեցի և տուրքի տակ դրեցի...>>: Մինչ այս նյութի պատմական արժեքին անդրադառնալը, ներկայացնում եմ ևս մեկ հատված հետաքրքրական նույն արքայի մի այլ արձանագրությունից մի .

<<...Թիլուլտի-նինուրտան..., շուբարիների երկրների ուժերի տապալողը և Նահրի երկրների՝ մինչև նրանց տեղերի սահմանները հեռավոր արահետները...>>:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ Թիլուլտի-նինուրտան Մ.Թ.Ա. 1234թ.ին գրավում է Կաշիարիից /լ.թա Մասիոն/ վեր ընկած հողերը, պատմական Սասունը, Տարոնը, Անձինտը, Կորդուքը և այլն:



Նկատենք մի հետաքրքրական փաստ, որը նշում է հենց արձանագրության հեղինակը Թ.-Ն.-ն: Ըստ նրա հայկական լեռնաշխարհի այս շրջանում գոյություն ունեին 2 համադաշնություններ, որոնցից մեկը Սուբրիականն էր, մյուսը Նահրյանը:

Սուբրիական համադաշնության մեջ մտնում էին հետևյալ <<հողերը>>՝ Բաբխի, Կադմուխի, Պուշի, Սուլմի, Ալգի, Մադանի, Նիխանի, Ալայա, Տիբուրգի, Պարագումգի և իհարկե հենց բուն Սուբրիան, իսկ ահա Նահրի մեջ մտնում էին միանգամից մի քանի տասնյակ <<հողեր>>, որոնք, մեկ կարող էին լինել 20 և ավել, ապա նաև 40 ու և մի քանիսը: Սակայն շուտով տարածաշրջանում սկսվում են , կարելի է ասել , արմատական փոփոխություններ, կապված նոր ժողովուրդների ի հայտ գալով: Դրանց թվում են `

մուշկերը, կասկերը, ուրումայեցիները /աբշլայեցիներ/:Նրանց սկզբնական բնակատեղին, որտեղից սկսել են իրենց գաղթը մնում է հիմնականում անհայտ, սակայն կան մի քանի հիաշատակման արժանի տեսակետներ, որոնցից են հանդիսանում Արամ Քոսյանինը, Դյակոնովինը և իհարկե Յակոբ Մանանդյանինը:

Մուշկերի KUR Mus-ki առաջին հայտնի ռազմական ներխուժումը տեղի է ունենում Մ.թ.Ա. 1165/64 թ.թ.ներին, որոնք գրավում են Ալզին և Պարագումզին. վերջիններս, ինչպես տեսանք, Սուբրիական համադաշնության անդամներից էին: Չբավարարվելով այդ հաջողություններով Մուշկերը 20 հազարանոց բանակով և 5 <<արքաների>>/առաջնորդների/ գլխավորությամբ Մ.թ.Ա. 1114թ.ին ներխուժում են Կադմուխի: Բայց Ասորեստանի նոր հզոր արքա Թիգլաթպալասար 1-ը դուրս է գալիս մուշկերի դեմ, հաղթում նրանց, ապա ներխուժում վերջիններիս տիրույթները, գրավում այն և կցում իր տերությանը: Յետաքրքրական մի փաստ կա, նշվող Ասորեստանի այս ժ/շրջանի արքաների արձանագրություններում, նրանք տարբերություն էին դնում Սուբրիական երկրների և Սուբարտուի միջև: Դրա բացատրությունը ես գտնում եմ նրա մեջ է, որ Սուբրիական երկրները դա առանձին ինքնիշխան տարածքներ էին սեփական իշխաններով առաջնորդներով, սակայն նրանց մեկ ընդհանուր ծագումը շատ հաճախ պատճառ էր հանդիսանում, որ միավորվեն ընդդեմ ընդհանուր թշնամու կամ վտանգի: Իսկ ահա Սուբարտուն, հավանաբար, համադաշնությունում ամենաազդեցիկն էր և հանդիսանում էր կենտրոնը, և չի բացառվում նաև այն փաստը, որ մյուս սուբրիական երկրները իրականում կախում ունեին վերջինիս առաջնորդներից: Մ.թ.Ա. 1113թ.ին Թիգլաթպալասար 1-ի առաջ դուրս են գալիս արդեն կասկերը և ուրումեացիները /աբշլայեցիները/, որոնք , սակայն, հրաժարվում են կռվի բռնվել և ընդունում են Ասորեստանի արքայի գերիշխանությունը:Ընդ որում այս ազգերը ուժով գրավել էին արդեն Սուբարտուի քաղաքները, որոնք ըստ Թիգլաթպալասարի հնազանդ էին Աշշուրին / Ասորեստանին/: Թիգլաթպալասար 1-ի հաջորդ Աշշուրբերկալայի Մ.թ.Ա.1077-1060 թ.թ. օրոք Սուբրիական երկրները հավատարիմ են մնում Ասորեստանին և շարունակում մնալ նրա իշխանության տակ: Իրադրությունը փոխվում է սկսած Մ.թ.Ա. 1060թ.ից , երբ Ասորեստանը սկսում է ապրել անկման ժ/շրջան մինչև Մ.թ.Ա.

883թ.ը, երբ գահին է բարձրանում Աշշուրնացի ապալ 2-րդը մինչև Մ.թ.Ա.859.:

Վերջինս նշում է , որ կարիք ունեցող ասորեստանցիները փախուստի էին դիմում իրենց տերերից դեպի Սուբրիա, սակայն նա կարողանում է նրանց հետ վերադարձնել , բացի այդ երբ նա գտվում էր Տուշխե քաղաքում , նրան են հասնում հարկերը և տուրքերը Բիթ- Չամանիից /Անգեղ տուն/,Նաիրիի երկրներից, ներքին ուրումույից և Անխիտ¹ Սուբրիացուց, հավանաբար միասնական Սուբրիայի արքայից /կամ էլ սրա տակ հասկացվում է Սուբարտուն/: Ստացվում է, որ Մ.թ.Ա. 1060-859 ընթացքում Սուբարտուն, հնարավոր է նաև դաշնակից մի քանի Սուբրիական հողեր միանում են մի կենտրոնական իշխանության շուրջ՝ կազմավորելով Սուբրիական թագավորություն / թագավորության կենտրոնը հավանաբար Ուպումու քաղաքն էր/: Եվ, իրոք, քաղաքական այսպիսի շրջադարձ կատարելու համար նրանք ունեին և պատեհ առիթ, և թե բավական ժամանակահատված, գրեթե 2 դար, որը կարող էր բավականացնել միասնական պետականություն ստեղծելու համար²:

Նույն այս Անխիտ/ե/ Շուբրիացուն հիշատակում է նաև հաջորդ Ասորոստանյան արքան՝ Սալմանասար 3-րդը Մ.թ.Ա.859-824.: Նա հիշատակում է, որ գրավել է Անխիտե Շուբրիացու մայրաքաղաքը՝ Ուպումուն <<..ես գրավեցի Ուպումուն, Անխիտե Շուբրիացու մայրաքաղաքը..>>: Մի շարք պատմաբաններ այս քաղաքը համապատասխանեցնում են հայկական Աֆուրում, Օպում /այժմյան Փում/-ի հետ: Դետքքրական է նաև այն, որ նա գրավելով քաղաքը ստիպված է լինում այստեղ վերադառնալ ևս մեկ անգամ արդեն Մ.թ.Ա. 854թ.ին և այս անգամ նա հիշատակում է ոչ թե Անխիտե արքայի այլ Անխիտիշշե Շուբրիացու: Այս արքաների անունների ներքո ըստ իս չի կարելի հասկանալ մի անձի, քանզի չեմ կարծում, որ նույն Ասորեստանյան արքան կարող էր նրանց շփոտել

1 Դետքքրական է Սուբրիայի արքայի անունը՝ Անխիտ: Շատ նման է հենց Սուբրիայի տեղադրության վայրում գտնվող հայկական մարգերից մեկի անվանը **Անձիտ**: Դավանաբար նրա անվանումը կապ ունի այդ շրջանի անվան հետ: Ամեն դեպքում հստակ պատասխան տալը անհնար են համարում ներկա պահին տեղեկությունների սակավաթվության պատճառով:

2 Դարկ են համարում նշել, որ Մ.թ.Ա. 1060-859 Ասորեստանյան արքաներից հասել են մի քանի արձանագրություններ, որոնցից մեկը Ադադներարի 2-րդին է, ըստ որի <<.. Վերադարձրի Արինու, տուրխու, Չադուրի քաղաքները, որորնք մտնում էին Սուբրիական համադաշնության մեջ>>.. Ամեն դեպքում այս տաղեկությունը մեզ ևս մի անգամ բերում է այն եզրահանգման, որ Սուբրիայում անջատողական տրամադրություններ էին տիրում:

իրար հետ: Բերեմ Բալավատյան դարպասին արված արձանագրության մեզ հետաքրքրող հատվածները.

<<...Իմ թագավորության 5-րդ տարում ես եկա Կաշիարի լեռների մոտ, նվաճեցի 11 ամրոց ամրացված, / Անխիտիշտե Շուբրիացուն շրջապատեցի իր քաղաքում / Ուպում/ և ստացա մեծաքանակ սուրբ ստացա նրանից...>>:

Պարզ է դառնում, որ Սուբրիան արդեն ձևավորված թագավորություն էր մայրաքաղաքով, արքայով, որը սեփական քաղաքականությունն էր վարում՝ հակադրվելով անգամ Ասորեստանին, և վերջանով ուներ ինչից կախված է յուրաքանչյուր պետականության ապագան՝ բանակ: Վերլուծականը բերում է նրան, որ ամենայն հավանականությամբ կողմերը կնքել են խաղաղություն այն պայմանով, որ Սուբրիան ճանաչի Ասորեստանի <<իշխանությունը>> և վճարի տուրք: Փաստ է նաև այն, որ Սուբրիայի հարավային սահմանը սկսվում էր Կաշիարիից: Ամենայն հավանականությամբ այդ 11 ամրացված բերդերը, ամրացված էին նախորոք, պաշտպանելու համար հրվ.ային սահմանը, որտեղից սպառնում էր ամենամեծ վտանգը: Սալմանասար 3-րդից հետո Ասորեստանը կրկին սկսում է ճգնաժամ ապրել, որը հնարավորություն է տալիս կազմավորվելու և հզորանալու Ուրարտական թագավորությանը, որի առաջին հզոր արքան Մենուան Մ.Թ.Ա. 810-786 սկսում է նվաճողական արշավանքներ հարևան երկրներ:

Հայաստանի հրվ.-արևմտյան մասերի նկատմամբ Ուրարտուն նույնպես ուներ իր ծրագրերը, բայց այս տարածքը նրանք անվանում էին հիմնականում այլ անուններով, օրինակ չկա որևէ մի հիշատակում Սուբրիա պետության մասին, ի տարբերություն դրա, կան Սուբրիական քաղաքների անվանումները: Շատ հաճախ ուրարտացիները Սուբրիայի /Սուբարտուն/ կետրոնական հատվածը անվանակոչում էին Սուբրիական խոշոր քաղաքներից մեկի Կուլիմարիի անունով /qu-ul-me-ri/: Մուշում և Տղմերթում Մենուայի կողմից թողնված արձանագրություններում նշում է, որ նաև այս շրջան կատարած արշավանքների ընթացքում գրավել է Ուրմեն /ասունեստանյան ուրումուն, որտեղ բնակվում էին ուրումեսացիները/ և Արխին, ապա նա հասնում է Կուլիմերի, և այդտեղի արքային թողում է իր գահին:

Ստացվում է, որ Սուբրիան պահպանում է իր ինքնիշխանությունը և ընդամենը տուրք վճարելով ազատվում Ուրարտական գերշխանության տակ ընկնելուց, չնայած հենց Մենուան է նշում, որ այս արշավանքը նա կազմավերպել էր հարկերի հավաքման նպատակով:

Այսուհետ Սուբրիան /qulmeri, kulimneri/ չի հիշատակվում հիմնականում որպես թշնամի կամ նվաճված երկիր Ուրարտական արձանագրություններում, և դա կապված է նրա հետ, որ Սուբրիան հանձինս Ուրարտուի տեսնում էր իր դաշնակիցին ընդդեմ Ասորեստանի և սկսում համագործակցել հենց նրա հատ , հավանաբար, ճանաչելով Ուրարտական ազդեցությունը: Այս մասին կխոսանք ստորև:

Թիգլաթպալասար 3-րդը և նրա արշավանքը դեպի Ուրարտու և Սուբրիա

Մենուայի թագավորության օրոք Սուբրիան ընկնում է հիմնականում Ուրարտական իշխանության տակ: Այս երկրի մասին, որպես նվաճվող տարածք կամ ռազմական իրադարձությունների թատերաբեմ այլևս չի հիշատակվում: Այդ մասին վկայություններ չեն տալիս Ուրարտական գերագույն հզորության շրջանի և ոչ մի արքա՝ Արգիշտին և Սարդուրին: Դա, ինչպես նշվեց , կապված է նրա հետ, որ Ուրարտուն այդպես դաշնակցում էր Սուբրիայի հետ ընդդեմ ընդհանուր թշնամու՝ Ասորեստանի:

Միջազգային ասպարեզում հակամարտող կողմերի միջև լարվածությունը հասնում է իր գագաթնակետին Ուրարտական արքա Սարդուրի2-րդի օրոք Մ.Թ.Ա. 764-735: Մ.Թ.Ա. 736/735թ.թ. Թիգլաթպալասարը ներխուժում է Ուրարտու, հասնում մայրաքաղաք Տուշպային և պաշարում այն, սակայն նրան չի հաջողվում գրավել այն: Ավերելով քաղաքի հարակից տարածքները՝ նա շարունակում է իր առաջխաղացումը արդեն դեպի հս. ապա Վանա լճի հյուսիսային ափերով առաջանում նրա արևմտյան մասերը՝ հասնելով Սուբրիայի հյուսիսային սահմաններին: Ահա թե ինչ է գրում Թիգլաթպալասարը.

<<...Քուտտա, Ուրրա, Արանա, Տարա, Ուալլիա, Եփրատից վերև, Կուխում, Կիլիմիր/ Սուբրիական քաղաք Կիլիմարի/, Աբբիսա, Խարպիսինա³ քաղաքներին /հասա/ Ինգի երկիրը, Անգանու, Բենգու Ուրարտական բերդաքաղաքները, նրա գետը Կալլամա ես գրավեցի..., Ասորեստանին միացրեցի...>>:

Պարզ է դառնում, որ Թիգլաթպալասարը ներխուժել է Սուբրիա հյուսիսից, գրավել Կուխումը, Կիլիմիրը, ապա նաև Աբբիսա և Խարպիսինա քաղաքները դրանցից հետո էլ արդեն Անգանու և Բենգու բերդաքաղաքները Կալլամա /Քադիրթ/ գետից արևելք:

Արշավանքը կարևոր հետևանքներ ունեցավ. նախ Ուրարտական պետությունը սկսեց թուլանալ, բացի այդ ամենայն հավանականությամբ Ասորեստանին բռնի կցվեց Սուբրիան, սակայն Ասորեստանի այս քայլերի հետևանքով ավելի սերտացավ Սուբրիայի Ուրարատամետ կողմը, որը ըստ երևույթին գերակշռում էր Սուբրիայում: Ամենայն հավանականությամբ Սուբրիան վերգտավ իր անկախությունը Թիգլաթպալասարի թագավորության ավարտի շրջանում Մ.թ.Ա. 728-727թ.թ.: Այս ենթադրության պատճառը կայանում է նրանում, որ քիչ անց Սուբրիական արքան սկսում է համագործակցել Ուրարատական իր գործընկերոջ հետ՝ Ռուսա 1-ինի Մ.թ.Ա. 735-713: Վերջինիս հետ հատկապես աշխույժ դիվանագիտական հարաբերություններ էր պահպանում Սուբրիայի արքա Նիկ-Թեշուբը, որի շնորհիվ էլ փոքրիկ Սուբրիան կարևոր դերակատարություն է ունենում այդ շրջանի միջազգային բարդ հարաբերությունների մեջ՝ ըստ երևույթին ցանկանալով այդ երկու գերիզոր տերությունների արանքում գտնել իր բաժին արևը:

Թիգլաթպալասար 3-րդին գահի վրա փոխարինում է Սարգոն 2-րդը Մ.թ.Ա. 727-707, որի օրոք վերջնականապես սրվում են Ուրարատա-ասորեստանյան հարաբերությունները՝ հասնելով իրենց կիզակետին, ընդ որում կարելի է ասել, որ այս հակամարտության մեջ իր ուրույն տեղն էր շարունակում պահպանել Սուբրիան:

³ Այս բնակավայրի անվանումը ըստ իս շատ հետաքրքրիչական ծագում ունի, այն կազմված է **Խարպի /հայ. ԱՐՓԻ Արեգակ, Արև/ և Սին-աա /հայ. Շեն- շինել/** բառերից, այսինքն ստացվում է , հավանաբար Արփիաշեն: Տեղակայում են Մարութա սարից արևելք 7-8 կմ Արփի մեծ գյուղի տեղում:

Սուբբիան մինչև Ասորեստանի գահակալումը ու Մ.թ.Ա. 673թ.ի արշավանքը

Սարգոնի օրոք Ուրարատուի և Ասորեստանի միջև հիմնական թեժ կետը համարվում էր Սուբբիան: Ուրարտական թագավորության հարավային գիծը անցնում էր արևմտյան Տիգրիսով և հարավում Ասորեստանին հարևանում Տուշիտ շրջանին, որը սահմանակից էր հենց Սուբբիային, ապա Տիգրիսի և Զաղիրթ գետերի միախառնման տեղից դեպի ներքև սահմանը ընդանալով՝ հասնում էր Կաշիրարիի /Մասիոն, Մասեաց/ լեռներին, որոնցով էլ գնում էր արևելք՝ Տիգրիս, ուր էլ արդեն սահմանակից էր դառնում ասորահպատակ Կադմուխիին /Կորդուք/:

Դեպքերի հիմնական մասը մինչպատերազմական հատվածում լարված էր հենց այս տարածքում, ուր Ուրարտական դաշնակիցը հակամարտության մեջ էր ասորահպատակ նահանգների հետ: Հարցի սրությունը կայանում էր նրանում, որ Սուբբիա էին փախչում բոլոր այն մարդիկ, ովքեր դժգոհ էին Ասորեստանյան իշխանությանից: Կարևոր այս իրադարձությունների մասին մեզ են հասել ասորեստանյան աղբյուրներ, բայց ոչ թե թագավորական տեղեկատուները, այլ կարելի է ասել, Ասորեստանի լրտեսական լրատվություն՝ ուղված Ասորեստանի արքային: Այսպիսի ինֆորմացիան ավելի վստակելի համարվելուց բացի, մեզ ավելի մանրամասնությամբ է ներկայացնում տիրող իրավիճակը: Հիմնական աղբյուրները տալիս են ասորեստանահպատակ շրջանների ղեկավարները՝ Կադմուխիի Աշշուրդուրայանիան, և Տուշիտեինը՝ Շու-Աշշուր-Դուբբուն:

Հետաքրքիր այդ վկայություններից ես կներկայացնեմ նրանք, որոնք վերաբերում են Սուբբիայի ուրարտահպատակ արքայի՝ Նիկ-Թեշուբի եղբորը Խու-Թեշուբին, որը ոնց պարզվում է գործում էր եղբոր թիկունքում՝ օգնելով Ասորեստանին ընդդեմ Ուրարտույի: Ահա մի նամակ, որը հասցեագրված է Սարգոն 2-րդին, ոմն Խու-Թեշուբից.

<<...Արքային, իմ տիրոջը, ամենաջերմ ողջյուններն է ուղարկում քո ծառան՝ Խու-Թեշուբը: Ինչ վերաբերում է Ուրարտուի արքային, քանզի արքան իմ տերը, գրել էր ինձ. <<Ամենը, ինչ կլսես,

անհապաղ / հաղորդիր/ >>.Քանի որ լսել էի սուտ /?/ /...թագավորություն: Այժմ /...../ քաղաքները՝ Ան/դին//?/ /...../ այժմ, եթե /...../ Մաննայեցիների երկրում փնտրում /էին/ /?/. /Ինչ/ ես լսել եմ /?/ նա տարածել է նրա իշխանությունը /?/, զիկերտացիների երկրի վրա այնտեղ նշանակելով նրան. Այդպես եմ լսել>>:

Ի.Մ.Դյակոնովը կարծում է, որ այս իրադարձությունները վերաբերում են Մ.Թ.Ա. 719թ.ին, երբ Ուրարտուի արքան Ռուսա 1-ինն էր Մ.Թ.Ա. 735-713թ.թ.ներ: Այստեղ մեզ պարզ է դառնում, որ, հավանաբար, Խու-Թեշուբը, ցանկանում էր ծառայելով Սարգոնի մոտ, ստանալ եղբոր գահը: Ահա մի այլ նամակ Խու-Թեշուբին վերաբերող, որը ուղարկել է Կադմուխի ղեկավար Աշշուրդուրպանիան:

<<Այժմ հայտնիր ինձ արքա, իմ տեր, ինչո՞ւ և չժամանեց նրա /Ռուսայի/ տեղապահի եղբայրը, որի մասին նա /Ռուսան/ ասում էր, որ կգա:- Խու-Թեշուբը, - ասացին սրանք,- թե հիվանդ է... Այս դեսպանները, որ եկել էին այդ տեղեկությամբ ասացին. <<Խու-Թեշուբը հիվանդ է: Մենք գնացինք և տեսանք>>: Նրանք այժմ կգան և կհայտնեն արքային, իմ տիրոջը, արդյոք ճիշտ է այս տեղեկությունը >>:

Աշշուրդուրպանիան անհանգստացած Սարգոնին հայտնում է այն մասին, որ իրենց Սուբրիացի գործընկերը չի ժամանել Կադմուխի Ուրարտացի դեսպանների հետ: Խու-Թեշուբի ասորահպատակ լինելու մասին վկայում է նաև Տուշիտի առաջնորդի հետևյալ արձանագրությունը.

<<Սուբրիացու եղբայրը /Սուբրիայի արքա Նիկ-Թեշուբի եղբայր Խու-Թեշուբ խմբ./ /ճանապարհի /ընթացքում /?/նրանց /ասորեստանցիների խմբ./ հետ հաց էր կիսում, նրանք միասին դուրս եկան այդտեղից և գնացին: Սուբրիացին նախորոք ծուղակ էր պատրաստել: Իմ երկու հրամանատարները և 6 հոգի կարողացան դուրս գալ ծուղակից և փրկեցին 2 զորահրամանատարներին>>:

Այսպիսով՝ Մ.Թ.Ա. 719թ.ներին և հաջորդած տարիների ընթացքում շատ կարևոր իրադարձություններ են տեղի ունենում, որոնց կիզակետում Սուբրիական թագավորությունն էր: Ամեն ինչից գատ կան նաև հետքեր իր և պատասխանի սպասող հարցեր,

որոնցից մեկը հանդիսանում է ասենք այն, թե ինչու Ասորեստանը Մ.թ.Ա. 714 Ուրարտու կատարած արշավանքի ընթացքում չի ներխուժում նաև Սուբրիա: Համենայն դեպս այդ մասին չկա հիշատակում Սարգոնի կողմից թողնված արձանագրությունների մեջ: միթե Սուբրիան այդքան բարդ էր գրավելը, այն դեպքում, երբ Ասորեստանը հանգստությամբ ծնկի կարողացավ բերել Ուրարտուին, բացի այդ պատճառներ իրականում կային և իրականում դրանք երկրորդական խնդիրներ չէին: Սուբրիայի դեմ ուժ գործադրելու պատճառներից էր նաև հենց այն, որ Ասորեստանից մասսայաբար գաղթում էին ամեն տեսակի անձինք, թե զինվորականություն, թե հասարակ մարդիկ ու ստրուկներ, և թե ազնվականներ: ահա այդ մասին վկայող արձանագրություններ հաղորդող Աշշուրդուրպանիան Սարգոնին.

<<Այդ գուրրիացի հիսունականը Մուտուրնա քաղաքից, գևաց Մուտուրնայի ծերակույտի մոտ: Այն պահից, երբ նա ճանապարհ ընկավ, նա այլևս հետ չի եկել, և իր եղբայրների հետգործ չի արել՝ վախենալով դրանցից/?: Եվս 15 գուրրիացիների նա իր հետ տարավ և հաստատվեց Ուրարտույում /նկատի ունի Ուրարտահպատակ Սուբրիան խմբ./>>:

<<Արքայի մարդիկ, երկրի մարդիկ, որոնք անցյալ տարի 3 անգամ փախուստի էին դիմել իրենց պարտականություններից՝ <<արքայական պարտականություններից>>, մեկնում են այնտեղ /Սուբրիա խմբ./ և այդ մասին գրում են մեկ մեկու>>:

<<Իսկ նախկին հպատակները, որոնք այժմ փախուստի են դիմել արքայական ծառայությունից և գևացել են այնտեղ, նա /Սուբրիայի արքան խմբ./ տալիս է նրանց դաշտեր, այգիներ և տներ՝ բանկեցնելով նրանց իր երկրում: Այնտեղ են նրանք ապրում>>:

Այս ամենը բացահայտորեն մեզ ցուցադրեց պատճառներ, որոնց համար Սուբրիան պետք է նույնպես արշավանքի ճանապարհին հայտնվեր, որը ըստ երևույթին տեղի չի ունենում: Արշավանքի ընթացքում Սարգոնը ընդամին մոտենում է Սուբրիայի սահամներին, բայց չի հիշատակվում հենց Սուբրիա ներթափանցելու փաստը: Ահա այդ հետաքրքրական հատվածը Լուվրյան տեքստից, որտեղ Սարգոնը ահա թե ինչ է ասում.

<<...Ես շարժվեցի Այադուլից, անցա Ալլուրիյա, Կալլանիա և Իննայա գետերը հասա մինչև Ուայախս, նրա ամրացված շրջանը՝ Ուրարտույի սահմանների վերջը, որը հարևան է Նաիրին...>>:

Այս Ուայախս շրջանը ինձ թվում է Հ. Մանանդյանը ճշգրիտ կերպով տեղակայում է Բիթլիսի տեղում, սակայն ես կբերեմ ևս մեկ շատ հետաքրքրական փաստարկ: Սարգոնը դուրս գալով Այադուլից, անցնում է երեք գետեր, որոնցից մեկի անվանումը՝ Կալլանիան ես նմանեցրեցի Թիգլաթպալսար 3-րդի մոտ հիշատակվող Կալլամա գետին:

<<... Անգանու, Բեդու Ուրարտական բերդաքաղաքները, նրա գետը Կալլամա / Կալլամա-ըստ авион N₀ 42/28/ կամ էլ Կալլ/ա/տ/?/ / ես գրավեցի..>>:

Անգանու և Բեդու քաղաքները գտվում են Սուբրիայում, իսկ ահա Կալլաման նույն Կալլանիան է, որը կնշանակի հետևյալը. Սարգոնը մտել է նաև Սուբրիա, մասնավորապես նրա հս. սահմանները: Կարող եմք անել միայն մեկ եզրահանգում, այն, որ որոշակի պատճառների առկայության հանգամանքը թույլ չի տալիս Սարգոնին ներթափանցել նաև Սուբրիա և ճնշել այդ անհպատակ թագավորությունը: Ասենք նաև այն, որ Ուրարտույի վերջնական սահման համարելով Բիթլիսը՝ նա ուզում է հասկացնել, որ նրա հարևանությամբ գտնվողները արդեն իրեն հպատակ էին: Եթե դա նույնիսկ այդպես է, ապա Սուբրիայի գրավումը նախորդել է Ուրարտուի դեմ արշավանքին և տեղի ունեցել Մ.թ.Ա. 719-714թ.թ.: Այս հանգամանքը ես ոչ կարող եմ պնդել, ոչ էլ հերքել, քանզի տվյալները շատ սուղ են : Բայց այն, որ Սարգոնից հետո արդեն Սուբրիան անկախ էր դա անհերքելի փաստ է:

Ասուրիադոնի արշավանքը Մ.թ.Ա. 673թ.ին և վերջին տեղեկությունները Սուբրիայի մասին

Սարգոն 1-ինին հաջորդում է Սենեքերիմը Մ.թ.Ա. 705-680, իսկ Սենեմքերիմին նրա որդի Ասուրիադոնը Մ.թ.Ա. 680-669:

Ինչպես տեսանք կան որոշակի կասկածներ, թե արդյոք Մ.թ.Ա. 714-673 թ.թ.ների ընթացքում Սուբրիան անկախ է եղել, թե գտնվել Ասորեստանի իշխանության տակ: Համենայն դեպս հաստատուն է այն, որ Ասուրիադոնի օրոք Սուբրիան անկախ թագավորություն էր,

և այս անգամ սա կրում էր ուղիղ իմաստ, քանզի Սուբրիան կախյալ չէր նույնիսկ Ուրարտական թագավորությունից: Սուբրիա էին սկսում գաղթել արդեն Ուրարտուից և Ուրարտական արքա Ռուսա 2-րդի այն պահանջին, որ Սուբրիական կողմը վերադարձնի իր հպատակներին, Սուբրիայի արքան պատասխանում է մերժումով: Ահա այդ մասին վկայող արձանագրությունը արված Ասորեստանի արքա Ասուրհադոնի կողմից.

<<...Ռուսան՝ Ուրարտուի արքան գրել էր նրան /Սուբրիայի արքային/ նրանց մասին /փախստականների/, բայց նա չէր ունկդրել նրա հրամանին, չէր համաձայնել նրանց վերադարձնել, այլ հանդգնությամբ գրել էր նրան և պատասխանել ատելությամբ...>>:

Սուբրիան ապահովում էր <<քաղաքական ապաստան>> բոլոր ցանկացողների համար, այդ թվում և Ասորեստանի Սենեքերիմ արքային սպանած որդիների՝ Ադրամելիքի և Սարասարի: Ահա թե ինչ է այդ մասին վկայում բաբելոնական ժամանակագրությունը.

Մ.թ.Ա. 680թ. <<Տեբետա /դեկ.-հունվար/ ամսի 20-ին Սենեքերիմին, Ասորեստանի արքային, սպանեց նրա որդին , /ներդինաստիական/ ապստամբության ժամանակ: 25 տարի թագավորեց Սենեքերիմը Ասորեստանում: Տեբետա ամսի 20-ից մինչև Ադարա /փետրվար-մարտ/ ամսի 2-ը տևաց ապստամբությունը Ասորեստանում: Ադարա ամսի 8 /?/ Ասուրհադոնը /Ասուրհադոնը/ նստեց Ասորեստանի գահին>>:

Նույն այս պատմական անցքերի մասին է վկայում նաև հենց ինքը Ասուրհադոնը և Աստվածաշունչը.

<<Իրական փաստերին,-ասում է Ասուրհադոնը,- իմ ժառանգության մասին տեղեկացան եղբայրներս և նրանք, մոռանալով աստվածների խորհուրդները, տրվեցին իրենց չար մտադրություններին, կազմակերպելով չարը, չար լեզվով նրան տարածեցին բանբասանքներ ընդդեմ աստվածների կամքի: Նրանք ապստամբեցին իմ դեմ և ի շնորհիվ կեղտոտ անհավատարմության, իմ թիկունքում կազմակերպեցին ապստամբություն: Բոլորը, ովքեր բացատրում էին իմ հոր ցանկությունը, ինձ դնում էին ընդդեմ աստվածների: Այն հոր, որը ուներ խորը սիրտ, ում հետ նրանք վարվում էին բարությամբ և միթե նրա աչքերը չէին , որ ինձ

նայելով, ասես ամրապնդում էին իմ թագավորական իշխանությունը>>: Մեկ այլ վկայություն Ասուրհադոնից.

<<Եղբայրներս, երբ իմացան իմ արշավանքի տեղ հասնելու մասին, լքեցին իրենց հավաքած ուժերը և հեռացան չգիտես ուր>>:

Միթե իրականում Ասորեստանի արքան չգիտեր, թե ուր են գնացել իր ապստամբ եղբայրները: Դրան պատասխան է տալիս Աստվածաշնչի հետևյալ վկայությունը.

<<Դուրս գալով՝ հետ եկավ Սենեքերիմը՝ Ասորեստանի արքան, որ ապրում էր Նինվեայում: Նա երկրպագում էր Նիսրոկային՝ իր աստծուն, երբ Ադրամելիքը և Շարացարը՝ նրա որդիները, սպանեցին նրան թրով և փրկվեցին՝ փախուստի դիմելով դեպի Արարատ: Եվ նրա փոխարեն գահին նստեց Ասուրհադոնը՝ նրա որդին>>:

Հավանական է արդյոք, որ Արարատի տակ կարող է հասկացվել Ուրարտուն: Ամենևին: Այս ժամանակահատվածում Ուրարտուն և Ասորեստանը հակամարտության մեջ չէին, և նույնիսկ շատ հարցերում նրանք համագործակցում էին, ինչպես օրինակ այն հարցերում, որոնք վերաբերում են Սուբրիայում հաստատված փախստականներին: Բացի դրանից նոր թափ էին առնում հս.ից ներխուժող ցեղերը, նաև նոր հզորացող Մարաստանը, որոնց դեմ պայքարում նրանք հիմնականում համակարծիք էին և կարելի է ասել, համագործակցում էին: Այս ամենը վկայում են այն մասին, որ Ուրարտուն կամ չեզոք դիրք ուներ, կամ էլ համագործակցում էր Ասորեստանի հետ և այդ ամենը հաշվի առնելով՝ Ասորեստանի իշխանությունից դժգոհ տարրերը երբեք չէին փախուստի դիմի վերջինիս դաշնակից ինչ որ մի պետություն: Մենք լավ հիշում ենք նաև այն, որ Սուբրիան <<քաղաքական ապաստան >> գտնելու լավ վայր էր, և ահա թե ինչ է ասում հենց Ասուրհադոնը Մ.թ.Ա. 673թ.ի իր Սուբրիա կատարելիք արշավանքից առաջ.

<</.../ Աշշուրի /ամե/նահաս խոսքը, աստվածների աստվածի, միակի, որ կարող է ճանաչել իմ իշխանությունը /.../ սրիկաները, գողերը կամ նրանք, ավքեր մեղսագործ են և արյուն են թափել /դեկ/ավարներ, նահանգապետեր, իշխանավորներ, զորահրամանատարներ, փախչում էին դեպի Սուբրիա>>:

Պարզից պարզ մեզ ի հայտ է գալիս այն տարերայնությունը, թե ինչպիսի մաշտաբ էր ստացել գաղթի չափը դեպի Սուբրիա: Սա ևս մեկ անգամ հաստատում է այն փաստը, որ արքային սպանող որդիների միակ ուղին տանում էր դեպի Սուբրիա /հենց սա ցույց տալու համար ես ընդգծել եմ արձանագրությանում - արյուն են թափել- հատվածը, որը ըստ իս արքան նշում է հենց իր մեղսագործ եղբայրներին մատնանշելու համար/:



Վանի թագավորության Թեյշեբա ասործու բրոնզե արձանիկը: Կարմիր քլուր

Այս ամենը բերեցին նրան, որ գերիզոր Ասորեստանը ստիպված դիմեց ուժի: Դա տեղի ունեցավ Մ.թ.Ա. 673թ.ին : Սակայն Ասուրհադունը, ինչպես ինքն է նշում, մինչ ուժի դիմելը մի քանի անգամ դիմել է Սուբրիայի արքային, որ վերադարձնի իր անհնազանդ հպատակներին: Բայց դա տեղի չի ունենում և Ասուրհադունին չի մնում ուրիշ ելք, քան սկսել պատերազմ: Կարճատև պատերազմում Ասուրհադունը կարողանում է ծնկի բերել Սուբրիական արքային Նիկ-Թեշուբ 2-րդին⁴ : Ասուրհադունը շրջապատում է մայրաքաղաք Ուփումը, գրավում այն և ձերբակալելով արքային՝ հրամայում է նրան սպանել:

Սպանելով Սուբրիայի արքային, Ասուրհադունը ձեռնամուխ եղավ անելու մի քայլ, որով ևս ցանականում էր վերջնականապես վերացնել այս փոքրիկ , բայց միաժամանակ պայքարող ու քաջ ազգին ու թագավորությունը: Այդ նպատակով ևս

երկու մասի է բաժանում Սուբրիան և նշանակում նոր ղեկավարների՝ Սուբրիան վերածելով հասարակ Ասորեստանյան նահանգի <<...Սուբրիան /բաժանեցի/ երկու մասի /...../ Բիլունին նշանակեցի Ուփումի, /իսկ/ Բել-Իդինային Կուլլմարիի ղեկավար, նրա սահմանները շրջեցի դեպի Ասորեստան....., և իմ թագավորական տուրքը սահմանեցի այնտեղ>>:

Ահա սրանից հետո կրկին սրվում են Ասորա-ուրարտական հարաբերությունները: Հավանաբար դա կապված էր նրա հետ, որ Ուրարտուն ևույնպես իր հավակնությունները ուներ Սուբրիայի նկատմամբ և ոչ մի կերպ չէր կարող հանդուրժել Ասորեստանի

վերջնական հաստատումը Սուբրիայում: Այժմ Ասուրիադոնը կասկածներ ուներ կապված Ուրարտուի արքայի՝ Ռուսա 2-րդի նկատմամբ, որը ըստ նրա կարող էր ներխուժել Սուբրիա՝ ցանականլով գրավել այն: Մեջ եմ բերում Ասուրիադոնի խոսքերը և կասկածները կապված այս խնդրի հետ.

Մ.թ.Ա. 672թ. <<Շամամ, մեծն տիրակալ, այս օրվանից Նիսաննա ամսի1-ից մինչև Դու՛ուզգու ամսի այս տարվա, արդյոք Ռուսան, արքան Ուրարտուի, մտադրվում է ճանապարհ ընկնել և մարտ տալ, սպանելու, թալանելու Սուբրիան, այն նվաճելու կամ Սուբրիայի ամրություններից որևէ բան վերցնելու համար...>>:



Մեկ այլ տեղում նա շարունակում է իր անհանգստությունը այս հարցի շուրջ.

<<...Ռուսան ` /Ուրարտուի/ արքան, /որին/?/...../ անվանում են Իայա, /...../ արքան երկրի Պա/...../, որին անվանում են /...../, մտածում էր արդյոք մտադրվել /լինի թե...../ լինի թե իր /խոր/հրդականների առաջարկով, լինի թե նա ինքը իր ուժերով, լինի թե կ/իմերների/, լինի թե նրա դաշնակիցների, որոնք իր հետ են. այն վայրից որտեղ, որ այժմ գտնվում են , /կուղղեն / իրենց ճանապարհը մարտ տալու համար, պատերազմի ու կռվի, սպանության, թալանի, Սուբրիան նվաճելու համար- լինի դա Ուփում քաղաքը, լինի դա Կուլլ /մե/րին, լինեն դրանք մյուս Սուբրիական ամրությունները, /կգնան/ արդյոք, և կսպանեն սպանությամբ, կթալանեն թալանով, կլցնեն իրենց ամբարները պարենով, թե ամրություններից Սուբրիայի կվերցնեն ինչ-որ մի փոքր կամ մեծ բան ու սեփականացնեն>>:

Ինչպես երևում է Ասուրիադոնը անհանգստացած էր, արդյոք Ռուսան իր դաշնակիցներով կգա իր դեմ, և կփորձի գրավել Սուբրիան: Իրադարձությունների այսպիսի զարգացումը ըստ

4 Քանի որ սկսած Սարգոն 2-րդի գահակալության ժամանակվանից Սուբրիական արքաները շարունակում էին կրել Թեշուբ կոչումը, որը խուրրիական ժողովուրդների մոտ գլխավոր աստվածությունն էր, ես այն կարծիքին եմ, որ դա մի դինաստիա էր: Բացի այդ, Սարգոնի և Ասուրիադոնի գահակալության շրջանում Սուբրիայում թասգավորած արքաների անունները նույնն են՝ **ՆԻԿ**:

երևույթի բերելու էին դրան, բայց թե որքան մեծածավալ կարող էր լինել իրական արշավանքը մենք չենք կարող նշել:

Ի ուրախություն պահպանվել է մի տեքստ որտեղ նշվում է հետևյալը.

<<Անդարիան նահանգապետը /այլ տարբերակ՝ գորավար/ Ուրարտու երկրի, որը իջավ և գիշերով եկավ, որպեսզի փորձի գրավել Ուփում /երկիրը/ և Կուլլիմերի /երկիրը/, - բայց Կուլլիմերիի բնակիչները, ծառաները ինձ ենթակա, գիշերը հանկարծակի մեծ ջարդ կազմակերպեցին, կենդանի չթողնելով ոչ ոքու, իսկ Անդարիայի գլուխը նրա կտրելով՝ ուղարկեցին ինձ մոտ՝ Նինվեա>>:

Ամեն դեպքում Ռուսան նախածեռնում է փորձ գրավելու Սուբրիան, սակայն որ թե Ասուրհադոնի այլ նրա հաջորդի՝ Աշշուրբանասպալի Մ.Թ.Ա. 668-633 թ.թ. օրոք, հավանաբար Ռուսան ցանկանում էր օգտվել նրանից, որ Աշշուրբանասպալը նոր է գահին նստել և անփորձ կգտնվի: Ըստ իս այս իրադարձությունը վերաբերում է Աշշուրբանասպալի գահակալման հենց սկզբնական շրջանին մոտավորապես Մ.Թ.Ա. 668-666թ.թ. /Ի.Ս.Դյակոնովը թվագրում է Մ.Թ.Ա. 664թ.ով/: Աշշուրբանասպալի մի այլ հիշատակում, որտեղ նշվում են նրան հարկատու երկրները կա նաև.

URU Sibartu /Սուբրիա/ երկիրը: Այս տվյալը Դ. Ն. Սարքսյանը /страна выдрия/ գրքի հեղինակը թվագրում է Մ.Թ.Ա. 652-650թ.թ.ներով, սակայն ես համամիտ չեմ այս կարծիքի հետ և առաջարկում եմ այն թվագրել համեմատյալ դեպս Մ.Թ.Ա. 653թ.ից առաջ ընկած ժամանակահատվածով և ահա թե ինչու:

Մ.Թ.Ա. 656-634 թ.թ. թագավորած Մարաստանի արքա Փրաորտեսը Մ.Թ.Ա. 653թ. Ընթանում է ընդդեմ Ասորեստանի և պարտության մատնում նրան, այս մասին գրում է Յերոզոտոսը.

Գիրք 1-ին 102 << Դեյոկիսի որդին էր Փրաորտեսը: 53 տարի թագավորելուց հետո Դեյոկիսը վախճանվեց և իշխանությունը ժառանգեց Փրաորտեսը: Ստանալով իշխանությունը, Փրաորտեսը չբավարարվեց միայն մեղացիներին տիրելով, այլև արշավեց պարսիկների վրա: Պարսիկները առաջինը ենթարկվեցին նրա հարձակմանը և առաջինը դարձան մեղացիներին հպատակ:

Տիրելով այս երկու հզոր ազգերին, Փրաորտեսը մեկը մյուսի հետևից սկսեց նվաճել Ասիայի ազգերին, մինչև արշավեց ասորեստանցիների դեմ , այն ասորեստանցիների, որոնք տիրում էին Նինվեին և նախկինում իշխում էին բոլորի վրա , իսկ այժմ , դաշնակիցների անջատվելուց հետո մնացել էին մենակ, բայց դեռևս իրենցից հզոր ուժ էին ներկայացնում: Ահա սրանց դեմ արշավելով, Փրաորտեսը, 22 տարի թագավորեց, հետո և ինքը կործանվեց և իր զորքի մեծ մասը>>:


Յերոդոտոսի այս վկայությունը պարզորոշ ցույց է տալիս, որ Մ.թ.Ա. 653 թ.ին Ասորեստանի հպատակությունից դուրս էին եկել նրա բոլոր դաշնակիցները: Նույնիսկ այդ արշավանքից առաջ էլ նա միայնակ էր մնացել իր թշնամիների դիմաց: Ասորեստանին իր հպատակությունն էր հայտնել նաև Ուրարտուի արքա Սարդուրի 3-րդը Մ.թ.Ա. /?/645-620, նա նվերներ և հպատակության մասին վկայությամբ արձանագրություն է ուղարկում Աշշուրբանասպալին:

Սա նշանակում է, որ Սուբրիան հնարավոր է այդ թվում ևս դուրս էր եկել Ասորեստանյան իշխանության տակից:

Այստեղ ցանկանում եմ նշել մի կարևոր հանգամանք: Ինչպես գիտենք Երվանդական թագավորությունը տեղակայվում էր ոչ թե Ուրարտուի տեղում այլ Սուբրիայի: Սրանք գոյություն են ունեցել միաժամանակ՝ Ուրարտուի կործանման շրջանում: Եվ Երվանդական դինաստիայի հաստատումը Սուբրիայում պետք է թվագրել հենց այս թվականներով: Ըստ երևույթին նրանք հաջորդում են Թեշուբյաններին /եթե արդյոք կարելի է այսպես կոչել այդ թագավորներին, բայց հիշենք, որ դրանից առաջ թագավորած Սուբրիական արքաներին անվանում էին Շուբրիացի օր.՝ Անիսիտ/ե/, Անիսիտիշտե Շուբրիացի /:Այսինքն Թեշուբյաններից առաջ էլ թագավորել են Շուբրիական դինաստիայի արքաները:

Ասորեստանյան թագավորության անկումը շարունակվում էր և արդեն Մ.թ.Ա. 616 թ.ին Ասորեստանից անջատվեց Բաբելոնը Նաբոպալասարի Մ.թ.Ա. 625-605 գլխավորությամբ: Մյուս կողմից սկյութական լուծը թոթափած Մարաստանը ևս Կիաքսարի Մ.թ.Ա. 625-584 առաջնորդությամբ սկսեց հարվածներ հասցնել Ասորեստանին և Մ.թ.Ա. 614թ.ին նա գրավեց Աշշուրը, որտեղ էլ Մարաստանի և Բաբելոնի միջև կնքվեց հակասորեստանյան

պայմանագիր: Իսկ Մ.Թ.Ա. 612թ.ին այս պայմանագրին միանում են նաև, որոշ վաչկատուն ցեղեր / umman manda/ : Նույն թվականին Մարական և Բաբելոնյան ուժերը մտան մայրաքաղաք Նինվե ու գրավեցին այն: Ասորեստանի դեմ պայքարը շարունակվեց Մ.Թ.Ա. 612-609թ.թ. ընթացքում:



Ահա այստեղ էլ սկսվում է մեզ հետաքրքրող մի պատմական անցք, որը վերաբերում է, ըստ Մ.Խորենացու, հայոց առաջին պսակյալ արքա Պարույրին: Ինչպես գիտենք Մ.Խորենացին այս հակասասորեստանյան պայքարի մասնակից է դառնում նաև ոմն Պարույրի հայոց թագավորության ղեկավարի: Այս մասին նշում է Մ.Խորենացին.

<<.....զմերս ասեմ Պարոյր... որ ոչ փոքր ինչ օգնականութիւն տուեալ

գտանի Վարբակայ /Կիաքսար/ Մարի, բառնալով զթագաւորութիւնն ի Սարդանապալայ>>:

Նախ այն հարցի շուրջ թե, որ թագավորության մասին է Մ.Խորենացին վկայում : Պարզ է դառնում, որ այս ժամանակահատվածում միակ դերակատարը կարող էր լինել Սուբրիան, այլ ոչ թե Ուրարտուն, քանզի Ուրարտական արքան նույնիսկ ասորահպատակ նամակ էր գրել Աշշուրբանասպալին մատավորապես Մ.Թ.Ա. 635-633թ.թ.ներին: Ամեն դեպքում Սարդուրին ըստ իս չէր կարող լինել Մ.Խորենացու Պարույր թագավորը: Բացի այդ Մ.Խորենացին չէր կոչի Ուրարտական թագավորներին առաջին պսակյալ արքա, քանզի նրանք վաղուց ինչ ունեին իրենց անկախությունը, և բոլորի կողմից ճանաչված արքաներին: Իսկ ահա այդպես նա կարող էր կոչել մի այլ թագավորության արքայի, որը նոր արքայատոհմի ներկայացուցիչ էր և պայքարում էր իր թագավորության անկախացման համար: Ինչը հենց կարելի է ասել սուբրիական նոր անկախացող

թագավորության մասին: Բայց ինչ պայմաններում ևս կարող էր ստանալ այդ ճանաչումը, միթե Պարույրը իրոք մասնակցում է իր զինյալ ուժերով հակասորեստանյան պայքարին: Յենց այս հանգամանքի վրա 1988թ.ին լույս տեսած <<Ուրարտու-Յայաստան>> գրքի հեղինակները Սուբրիան անվանում են հնագույն հայոց պետական միավորումը, իսկ Պարույրին անվանում նրա Երվանդական դինաստիայի հիմնադիրը: Դա կնշանակեր, որ հայոց ուժերը սկսած Մ.թ.Ա. 612թ.ից մասնակից են եղել Ասորեստանի դեմ մղվող պայքարին մինչև նրա վերջնական կործանումը Մ.թ.Ա. 605թ., երբ դաշնակիցներին հաջողվում է վերջնականապես ջախջախել Ասորեստանի բանակին Կերքեմիշի մոտ:

Ամեն ինչ այսպես էլ կարելի է թողնել, քանզի չկա ակնհայտ հակասություն: Բայց եթե հաշվի առնենք միայն այս տվյալները: Մեջ եմ բերում այն, ինչ մեզ ցույց է տալիս մի այլ հակառակ փաստ, արված Բաբելոնի արքա Նաբոպալասարի կողմից Մ.թ.Ա. 611թ.ին.

<<...հաղթանակած /քայլեցի/?..../ դեպի երկրները Խ/ալա/խիսա /?/, Խալ/ցու/??/, ևսև դեպի երկիրը **Սուբրիա** նվաճեցի, նրանց ունեց/վածքը վեր/ցրեցի, մթերքով /մեծա/քանակ ես/?/ մթերեցի>>:

Մեկնաբանությունը ավելորդ համարելով ` նշեմ միայն այն, որ այստեղ եթե ընդունենք Մ.Խորենացու հաղորդած տարբերակը, ապա նկատվում է դաշնակցի հարձակում դաշնակցի վրա, որը անհավանական էմ համարում: Այսինքն դա նշանակում է, որ գոյություն չի ունեցել Պարույր անունով Երվանդական արքա, թե կա մի այլ տարբերակ: Այո, կա մի այլ տարբերակ և դա այն է, որ Սուբրիան չի մասնակցել մասնակցել Ասորեստանի կործանմանը և նույնիսկ համարվել է հակասորեստանյան դաշինքի անդամների հակառակորդ, որի պատճառով էլ զոհ է դարձել Բաբելոնի արքայի ճանապարհին: Թե ինչի հետ կապված կարող դա կատարվել կարելի է միայն գուշակել:

Ամեն դեպքում պարզ է դառնում, որ Սուբրիան դիտվել է, որպես թշնամի երկիր` Ասորեստանի հավանական դաշնակից: Եվ սա ավելի հավանական է , քանզի թույլ է տալիս բացատրել մի այլ պատմական բաց, որը վերաբերում է Մ.թ.Ա. 597/ 594-593թ.թ.ներին, երբ Բաբելոնի Նաբուգոդանոսը արքան գնում է ընդդեմ հրեաների`

գրավելու Երուսաղեմը: Երեմիա մարգարեն կոչով դիմում է Արարատյան թագավորությանը և Ասքանազյան գնդին օնություն ցուցադրելու խնդրանքով.

<<Առեք նշան ի վերայ երկիրդ, փող հարեք ընդ ազգս ամենայն, հրաւիրեցեք ի վերայ դուրս գունդս, պատուեր տուք յինէն Այրարատեան թագավորութեանցն և Ասքանազեան գնդին...>>: Մարգարեութիւն Երեմեայ, գլ. ԾԱ.27: Եբրայական բնագրի նույն հատվաքում ասվում է.

<<...զազգս կոչեցեք ի վերայ դորա զթագավորութիւնս Արարատայ, Միւնոյ և Ասքանազայ...>>: Այստեղ օգնության խնդրանքով Երեմիան կոչով դիմում է նաև Միևնական թագավորությանը /հավանաբար Մաննային/: Եվ ինչպես կհիշեք մի այլ աստվածաշնչյան հատվածից Արարատյան թագավորությունը, ոչ թե Ուրարտուն եր այլ Սուբրիան և քանզի Նաբուպալասարի կողմից Մ.թ.Ա. 611 թ.ին այն դիտվել էր որպես Բաբելոնի թշնամի, ապա պարզ է դառնում, թե նրա հաջորդի Նաբուգոդանոսերի օրոք ինչու պետք է հրեաները օգնությամբ դիմեին Բաբելոնի թշնամիներին, այդ թվում և Սուբրիային, որը իրականում դաշնակից չէր Մարաբաբելոնական դաշինքին, ինչպես ցույց է տալիս Մ.Խորենացին:

Ամեն դեպքում Սուբրիան կարող էր ունենալ Պարույր անունով արքա, որը ամեն դեպքում չէր կարող մասնակից լինել Ասորեստանի կործանմանը: Հայերի մասնակցությունը այս պայքարում ես կասկածի տակ եմ դնում: Այստեղ մեջ բերեմ մի այլ նրբություն, կապված Պարույրի ծագման հետ:

Պրոֆ. Գր. Ղափանցյանի <<Ուրարտու>> աշխատության մեջ ես հանդիպեցի մի հետաքրքրական պնդման՝ արված հեղինակի կողմից, որը հարկ եմ համարում մեջ բերել ամենայն մանրամասնությամբ.

<<...Թե կիմներները և թե սկյութացիները եկվոր են համարվում Սև ծովի մոտ եղած տափաստաններից /Յս.Կովկաս/ Դրանց և մեդացիների հադես գալը Մերձավոր Արևելքում վերջին հաշվով խարխլեց և կործանեց շատ քաղաքական և ցեղային միություններ: Ասորեստանը և Բիայնան /Ուրարտու/ այդ հաշվեհարդարի մեջ էին: Սակերը սկյութական ցեղ էին /իրանական ծագումով են համարվում/, ապա մենք այդ saka /խմբ. Պտղոմեոսի քարտեզում

կա նաև SACASENE REGIO Շիրակից արևմուտք/ անունը կապում ենք հայոց <<սկա>> բառի հետ, որ սկզբում ցեղանուն էր, իսկ հիմա դրա հատկանիշն է ցույց տալիս /<<մեծ>>, <<պարթև>>,<<հսկա>>/ նման վրաց ցմիր բառի նույն փոփոխման: Այդպես և <<Սկայորդի>> Պարույրը, ըստ Խորենացու առաջին պսակյալ թագավորն է:..>> Տողատակում հեղինակը շարունակում է. <<Այս <<սկայորդի>> բառը տառացի նշանակում է սակի որդի /սակիդ, սակյան/:....Հայոց Սկայորդի կազմությունը <<որդի>> բաղադրիչով նույնպիսի հնագույն առումով է ցեղին կամ տոհմին պատկանելու համար, ինչպես և իսալդական -xi /ni/ մասը և վրաց svili մասը: Այնպես որ skaj-ordi չի նշանակում տառացի սկայի որդի /սակի/ որդի, այլ՝ սակյան ցեղից, սակ տոհմից:... Ըստ աստվածաշնչի Գոմերը ուներ երեք որդի- Ասքանազ, Ռիֆատ, Թորգոմ, որոնցից առաջինը սկյութացիների ցեղային անունն է /aska-nazi, որտեղ aska= հայ. <<սկա>> ասորեստանյան askuza/>>:

Մեզ հայտին է սկյութական <<սակասաններ>> ցեղը, որոնք ապրում էին պատմական Հայաստանի Կարս նահանգից վերև, Կուրի ակունքների մոտ արևմուտքում սահման ունենալով Ճորոխ գետը: Սկյութերը , արդեն Մ.թ.Ա. 6-5 դարի վերջերին ամբողջությամբ տարածվել էին այժմյան ՀՀ-ի տարածքում, բայց նրանց տարածումը սկսվել էր դեռ մեկ, մեկ ու կես դար առաջ : Նրանք Մեդական արքա Կիաքսարին դեռևս Մ.թ.Ա. 630թ. կարողացել էին ծնկի բերել և ըստ Հերոդոտոսի մինչև Մ.թ.Ա. 606թ. իշխում էին տարածաշրջանում: Կարո՞ղ է արդյոք հիմք լինել, որ մենք Պարույրին տանք սկյութական ծագում: Ամեն դեպքում փաստեր կան այդպիսի պնդումներ կատարելու համար: Բացի այդ սկյութացիների ներկայությունը մենք կարող ենք շոշափել նաև Ուրարտուի պատմության մեջ: Հետքորքիր է այն, որ Սարգուրի 3-րդին հաջորդած Ռուսա 3-րդը իրեն անվանում է <<erimenaxi>>, այսինքն Երիմենայի որդի, կամ էլ Պարույրի նույն տարբերակով, դա ցույց է տալիս նրա ծագումը . ստացվում է Ռուսա Երիմենյան ցեղից: Իրադարձությունների թվագրումը շատ լավ ցույց է տալիս, որ սկյութերի տարածաշրջանում հայտնվելը հսկայական ազդեցություն է թողել հայկական պետությունների հետագա պատմության վրա: Հարցերը և հավանական պատասխանները գալիս են իրար հետևից: Կարելի է պնդել , որ այստեղից է գալիս նաև Արմենիա անվանումը /Երիմենա/ և /Բեհիստունյան

արձանագրությունում Արմինային Բաբելոնական տարբերակում Ուրաշտու են կոչում/ պատահական այսքան փաստեր լինել չեն կարող և ըստ երևույթին սկյութական երկու ցեղերից ծագող ներկայացուցիչների համապատասխանորեն հաջողվել է տիրանալ երկու հայկական պետությունների գահերին:

Այս ժամանակաշրջանում էլ ավարտվում է Սուբրիա անվամբ պետության գոյությունը և նրան գալիս է փախարինելու Արմենական պետությունը, Արմինան կամ Արմենիան, որը միավորում է իր մեջ երկու հայկական պետական միավորները մեկ միասնականի մեջ:

Երվանդունիների դինաստիա

Ընդունված է հայոց պատմագրության մեջ այն տեսակետը, որ մինչ Կիաքսարը կպատերազմեր Մ.թ.Ա.585թ. Կրեսոսի՝ Լիդիայի արքայի հետ, նվաճել է վերջնականապես Ուրարտուն: Այսինքն նրա անկումը թվագրում են Մ.թ.Ա. 590-585թ.թ.: Աստյուազեսը /Աժդահակ/ հաջորդում է Կիաքսարին Մ.թ.Ա. 584-558:

Աժդահակի մասին մենք ունենք տվյալներ նաև Մ.Խորենացուց, այն որ հայոց թագավոր Տիգրանը կնության է տալիս իր քրոջը՝ Տիգրանուհուն, Աժդահակին, ապա իմանում վերջինիս դաժաճան մտադրությունների մասին : Պատմահոր մոտ կան վկայություններ նաև Հայ-մարական պատերազմների մասին, որտեղ հայերը հաղթող են դուրս գալիս: Սակայն Պատմահոր մի շարք տվյալներ ժամանակարգական սխալներ ունեն, ինչպես օրինակ այն, որ ըստ նրա Տիգրան Երվանդյանն է Տիգրանակերտի կառուցողը: Այնպես որ մենք հավաստի չենք կարող համարել Պատմահոր բոլոր վկայությունները, բայց կարող ենք համեմատական անցկացնել այլ աղբյուրներից հայտնի տվյալների հետ: Զսենոփոնի <<Կյուրոսի Կրթությունից>> իմանում ենք, որ Աստյուազեսի դեմ ապստամբել է, ոչ թե Տիգրանը այլ նրա հայրը, որի անունը չի պահպանվել /չկա նշված Զսենոփոնի մոտ/, բայց ընդունենք Պատմահոր տարբերակը և անվանենք նրան Երվանդ: Բացի այդ նկատենք, որ Զսենոփոնի մոտ հայերը ապստամբում են նաև Կիաքսար 2-րդի Մ.թ.Ա.558-550 դեմ, չնայած հայերը Աստյուազեսի հետ պայքարում պարտվել էին, սակայն հայոց ազատատենչ արքան ամեն կերպ ձգտում էր


ազատության: Կիաքսարի օրոք նրա իշխանությունում շատ բարձր դիրք էր զբաղեցնում Աքեմենյան տոհմից սերող Կյուրոսը: Մեջ եմ բերում Քսենոփոնից մի հատված.

<< <<Ասա ինձ,- ասաց Կյուրոսը,- կռվե՞լ ես դու երբևիցե իմ մոր հոր՝ Աստյուազեսի, և այլ մեղացիների հետ>>: <<Այո>>,- ասաց թագավորը /Երվանդը/:<<Հաղթված լինելով նրանցից՝ համաձայնե՞լ էիր, որ տուրք կվճարես, պատերազմի կգնաս միասին, ուր որ ասե, և ամբողջուններ չես ունենա>>: <<Այդպես է>>: <<Արդ՝ ինչո՞ւ այժմ ոչ տուրք ես վճարում, ոչ զորք ես ուղարկում և սկսել ես ամբողջուններ շինել>>:<<Ես,- ասաց թագավորը,- ազատության էի ձգտում, որովհետև լավ էի համարում, որպեսզի թե ինքս ազատ լինեմ և թե որդիներիս ազատություն թողնեմ>>:....>>:

Այս հատվածը պատմական առումով շատ մեծ կարևորություն ունի և պարունակում է բազմաթիվ հետաքրքիր տվյալներ: Հայոց արքան պայքարի մեջ է եղել Մեդական թագավորության հետ սկսած Մ.թ.Ա. 560-ականներից մինչև Կիաքսար 2-րդը և ամեն դեպքում պարտված է եղել, բայց պահպանել է իր ազգի համար ինքնուրույնություն: Քսենոփոնի մոտ կա նաև մի հատված, որը ցույց է տալիս հայկական բանակի իրական հնարավորությունների մասին տվյալները և այն , որ Երվանդի հայրը նույնպես արքա էր հայոց և նրանից է ստացել հայոց գահը.

<< Ապա արմենների թագավորը ասաց,-<<Արմենների հեծելազորը մոտ ութ հազար է, և հետևակը՝ մոտ քառասուն հազար. Իսկ իմ կարողությունը, այն հարստությունների հետ միասին, որ թողել է իմ հայրը, հաշվելով արծաթ դրամով, ավելի է քան երեք հազար տաղանդ>>:....>>:


Որպես այդպիսին Մ.Խորենացու մոտ Երվանդից առաջ հիշատակվում է Հայկակը: Եթե կազմելու լինենք Երվանդունիների արքայացանկը ապա ստացվում է մոտավորապես հետևյալ պատկերը.



Հայկակ ? Երվանդի հայրը, չենք կարող ասել, որ հանդիսանում է Պարոպրի հաջորդը: Մ.թ.Ա. 580-560 ականների միջև



Տիգրան Երվանդյան Մ.Թ.Ա. 550-
ականներ- 535/?/



Երվանդ /Արմենների արքա/ Մ.Թ.Ա. 560
կեսերից- 550ականներ: Թագավորել է
Աստյուազեսի օրոք Մ.Թ.Ա. 584-558

Ըստ Յերոդոտոսի Կյուրոսը գրավում է Փոքր Ասիայի բոլոր երկրները, հավանական է նաև, որ Երվանդական Յայաստանը, բայց ըստ իս դա տեղի է ունեցել Մ.Թ.Ա. 539թ.ի Բաբելոնի գրավումից հետո միայն, մինչև Մ.Թ.Ա. 530 թ., ընկած ժամանակահատվածում, երբ նա մահացավ սակ-մասանագետների հետ պայքարում:

Արմենների և Խալդայների տարածքը, նրանց միջև ընթացող պայքարը, նրանց միացումը իրար

Քսենոփոնի <<Կյուրոպեդիայից>> մեզ պարզ է դառնում, որ արմենների երկրից հարևան էր Ասորիքին: Իսկ նրանց միջև սահմանը լեռնոտ էր և անտառապատ, որը հարուստ էր որսատեղերով:

Գիրք 2-րդ գլուխ 4 /16/ <<....ես բոլոր իմ մարդկանց հետ,-ասում է Կյուրոսը,- հաճախ որսի եմ գնացել քո և Արմենների երկրի սահմանների մոտ....>>: Մեկ այլ հատված.

Գիրք 2-րդ գլուխ 4 /21/<<Որսի վերջացնելուց հետո Կյուրոսը, մոտենալով Արմենների սահմաններին՝ ճաշեց: Յետևյալ օրը նորից որսի գնաց մոտ գալով լեռներին, ուր նա ձգտում էր գնալ>>:

Ընդ որում Կյուրոսից միշտ 2 փարախ՝ 10-12 կմ. վրա գտնվում էին Կիաքսարի ուժերը՝ գտնվելով միաժամանակ Ասորիքի սահմանամերձ ամրություններում: Եթե փորձենք մեկնաբանել այս հատվածները, ապա դուրս կգա, որ սահմանամերձ լեռների դերը կարող է կատարել միայն Կաշիարիի լեռները: Ընդ որում հայոց արքան ուներ իր ապահով տեղը, ուր մեկնում էր իր ընտանիքի և հարստությունների անվտանգությունը ապահովվելու համար, ահա թե այդ մասին ինչ է ասվում.

Գիրք 2-րդ գլուխ 4 /22-23/<<...Դու , ով Խրյուսանտաս. Երբ, ինչպես հարկն է, կհանգստանաս՝ վերցրու պարսիկների կեսը,

որոնք մեզ հետ են, գնա լեռնային շրջանը և գրավիր լեռները, ուր
նա, ինչպես ասում են , փախչում է, երբ որևէ բանից վախենում է:
Ուղեցույցներ ես քեզ կտամ: Ասում են , որ այդ լեռները
անտառապատ են , այնպես որ հույս կա, որ ձեզ չեն տեսի...>>:

Տվյալ դեպքում խոսքը, հավանաբար, Մուշի լեռների մասին է
պատմական Տարոն գավառում : Կյուրոսը , ցանկանալով
անակնկալի բերել հայոց արքային, կտրում է նրա փախուստի
ճանապարհը, իսկ ինքը շարժվում դեպի արքայի ապարանք
ամրոցը.

Գիրք 2 գլուխ 32 /24/<<...իսկ ես /Կյուրոսը/ կվերցնեմ ինձ հետ
լուսաբացին հետևազորի մյուս մասը և ամբողջ հեծելազորը և
կգնամ դաշտի միջով ուղիղ թագավորի ապարանք ամրոցը... >>:

Այս հատվածը ես ցանկանում եմ համեմատել Քսենոփոնի մի այլ
աշխատության ` <<Անաբասիսի>> մեջ հիշատակվող ապարանք-
ամրոցի հետ, քանզի երկուսն էլ իրար հետ կապ պետք է ունենան.

Անաբասիս Գիրք 4 գլուխ 4 /1-2/<<...գետը /Կենտրիտես/
անցնելուց հետո հելլենները դասավորված շարքերով ճանապարհ
ընկան Արմենիայի միջով մոտավորապես կես օրի և անցան
դաշտավայրերով ու լերկ բլուրներով ոչ ավելի քան 5 փարսախ:
Կռիվների պատճառով Կարդուխների դեմ գետի մոտ գյուղեր
չկային: Այն գյուղը, որին նրանք եկան` մեծ էր, ուներ սատրապի
համար ապարանք-ամրոց և տների մեծագույն մասի վրա կային
աշտարակներ>>:

Ամեն դեքում նշեմ, որ <<Կյուրոսի Կրթության>> և
<<Անաբասիսի>> մեջ նշվող իրադարձությունների միջև կա 160
տարվա տարբերություն: Սակայն վերադառնանք մեջբերմանը,
արդյո՞ք դա նույն ապարանք-ամրոցը չէ: Ավելի հավաստի լինելու
համար բերեմ այդ նույն անմարդաբնակ դաշտերի մասին նշող
վկայությունը արդեն << Կյուրոսի Կրթությունից>>.

Գիրք 3 գլուղ 2 /2/<<Այս բոլորը Կյուրոսը լսեց և զննելով շուրջը,
նա նկատեց, որ Արմենների երկրի մի խոշոր մասն անմշակ է ու
անմարդաբնակ պատերազմների պատճառով>>:

Այդ անմշակ դաշտերի մյուս կողմում` դեպի արևելք լեռներ էին, որ
գտնվում էին Խալդայների ձեռքի տակ: Սա էլ իր հերթին գալիս է

ապացուցելու, որ այստեղ կոսվում է նույն ապարանք-ամրոցի մասին: Այսպիսով մեզ համար պարզ է դառնում Արմենների երկրի սահմանները Մ.թ.Ա. 6 դարի կեսերին: Քսենոփոնի մոտ նշվող շատ հետաքրքիր փաստերից է նաև այն, որ արմենները պայքարի մեջ էին իրենց հարևան ազգերի դեմ : Խալդայների ու Կորդուխների ասպատակությունների և նրանց միջև մշտական պայքարի արդյունքում Արմենների թագավորության մի մասը անմարդաբանկ էր դառնել:



Նույն <<Կյուրոսի Կրթությունում>> նշվում է, որ Կյուրոսի օգնությամբ արմենները գրավում են են այդ լեռների գագաթները և խաղաղություն հաստատում երկու ազգերի միջև.

Գիրք 3 գլուխ 2 /23-24/<<.....Այնուհետև բոլորն էլ իրար հավատարմության խոստում տվեցին և համաձայնության եկան, որ երկու կողմերն էլ իրար հանդեմ կպահպանեն ազատություն, նրանք իրավունք կունենան փոխադարձ ամուսնության, իրար հողերի ու

արոտավայրերի օգտագործման և կապաշտպանեն իրար ընդհանուր ուժերով, եթե իրենցից որևէ մեկին անարդարություն արվի: Արդ՝ այս կարգադրվեց այն ժամանակ ու նաև այժմ՝ Խալդայների և Արմենիայի իշխանավորների միջև կնքված այն դաշինքը մնում է անխախտ>>:

Ես գտնում եմ , որ այս բացառիկ տեղեկությունը պարունակում է այն, ինչի շնորհիվ երկու ազգեր հետագայում միավորում են իրենց ուժերը մեկ միասնականի մեջ: Ընդ որում վերջին մասում Քսենոփոնը նշելով, որ այդ պայմանագիրը դեռ մնում է ուժի մեջ ցանկանում էր հասկացնել տալ, որ Մ.թ.Ա. 400թ., երբ նա անցնում էր այս շրջաններով , այս պայմանագիրը անխախտ էր՝ կնքված դեռևս 160 տարի առաջ: Հենց սրա շնորհիվ նախկին Ուրարտական թագավորության իրավահաջորդների՝ Խալդայների և Սուբրիայի հետնորդների՝ արմենների միջև հաստատվում է խաղաղություն և հիմք դառնում նրանց միավորման մեկ պետության մեջ: Այս ամենը այնքանով է հետաքրքիր, որ ընդհամենը 40 տարի անց , երբ սկսվում է Դարեհի դեմ մեծ ապստամբություն, այս երկու ազգերը պայքարում էին միասին, և եթե մենք ավելի մանրամասնությամբ նայենք ճակատամարտերի տեղադրությանը և առանց ինքնամեծարման մեկնաբանենք Բեհիստունյան արձանագրությունը, մենք կստանանք այն ինչի մասին ես ասում եմ: Հաջորդ հատվածում ես անդրադառնալու եմ հենց Մ.թ.Ա. 521-520թ.թ. մեծ ապստամբությանը, բայց մինչ այդ անդրադարձ կատարեմ մի քանի հարցերի:

Ինչպես ինձ երևի հասկացաք, ես այսքան ժամանակ ցանկանում էի պնդել, որ գոյություն են ունեցել երկու հայկական պետական միավորներ՝ Ուրարտուն և Սուբրիան: Բայց միաժամանակ կային այլ ցեղային միություններ, և մանր պետություններ, որոնք հիմնականում երկրորդական դեր են խաղացել: Նշեմ նաև, որ ուրարտները և Սուբրիացիները /հարկավոր եմ համարում ասել, որ սուբրիացիները դրախուրրիական ծագում ունեցող ազգ է/, մեկ ընդհանուր ծագում ունեն: Նրանց առասպելները , աստվածությունները շատ հաճախ նմանակում են մեկը մյուսին, ինչպես օրինակ սուբրիական /և առհասարակ սա ամենագլխավոր աստվածությունն է եղել խուրրիների մոտ/ Թեշուբ գլխավոր աստվածը համապատասխանում է ուրարտական Թեյշեբային, և

վերջապես ամենակարևորը այն է , որ լեզվաբանական առումով խուրրիերենը և ուրարտերենը կազմում են մեկ ճյուղ՝ խուրրի-ուրարտական: Այսինքն ստացվում է, որ այս երկու ազգերը ունեն մեկ ընդհանուր ծագում և հիմնականում նրանց վերջնական միավորման արդյունքում է առաջանում հայ ազգը, չնայած լրացնեմ, որ ազգի ձևավորման գործընթացը չավարտվող գործընթաց է . այն երբեք կանգ չի առնում: Հայերիս բնօրրանը ստացվում է, որ Սուբրիան է՝ այն պետությունը, որը գոյություն է ունեցել դեռևս Ուրարտուից շատ ավելի վաղ ժամանակներում: Հարկ եմ համարում ասել, որ Միտանին նույնպես կապ ունի Սուբրիայի հետ, քանզի վերջինս կարևոր տեղ է զբաղեցրել Միտանիում, միայն բավարար է նշել այն, որ Միտանիի մայրաքաղաքը՝ Նիխիրիանին, տեղակայվել է Սուբրիայի սահմանում: Այսինքն Միտանիի կորիզը դա Սուբրիան է եղել:

Այս լուծումը դեռևս անավարտ եմ համարում, քանզի այն կարող է ավելի շատ պատասխաններ տալ, քան այժմ: Այս ուղղությամբ դեռ շատ աշխատանք կա անելու. նյութերը ամենօր թարմանում են, և համապատասխան վերաբերմունքի դեպքում կարելի է գտնել, նոր ապացույցներ և փաստեր, պատասխանելու համար այն հարցերին թե ով ենք մենք՝ հայերս, որտեղից ենք և վերջապես ուր ենք գնում...

Մ.Թ.Ա.521-520 թ.թ. ապստամբությունը և արմենների ու խալդայների միասնական պայքարը

Նախ անդրադարձ կատարենք Բեհիստունյան արձանագրության ամենակարևոր հետերի վրա: Դա նախ և առաջ վերաբերում է նրան, որ եռալեզվյան այդ տեքստում Հայաստանը հանդիպում է և Արմինա և Ուրաշտու տարբերակներով: Որպես այդպիսին հայոց արքա չի հիշատակվում կամ հայոց ուժերի առաջնորդ, սակայն հայերի ներկայությունը այսքանով չի սահմանափակվում: Նախ նշեմ, որ հայերի դեմ ուղարկված զորավարը ինչպես նշում է Դարեհը ազգությամբ հայ էր: Հայ էր նաև, չգիդես թե ինչպես, Բաբելոնում հայտնված մի հայ, որը կարողացել էր առաջնորդել Բաբելոնացիների ապստամբությունը:

Սակայն վերադառնանք Հայաստանում ընթացող ապստամբությանը, որը տարբեր ձև է մեկնաբանվում հայ պատմաբանների կողմից: Շատ հաճախ ասում են , որ հայերին

հաջողվել է հաղթանակ տանել առաջին երեք ճակատամարտերում և միայն վերջինների ընթացքում պարսիկները կարողանում են վերջնական հաղթանակ տանել: Իսկ այն, որ Դարեհը ասում է , թե բոլորում հաղթանակ է տարել , դա ըստ հայ մի շարք պատմաբանների սուտ է: Ահա և այժմ ես կապացուցեմ, որ իրականում Դարեհը հիմնականում ճշմարտությունն է գրել, և ոչ մի դեպքում նա սխալ չի եղել:

Պատերազմի ընթացքին ավելի լավ մեկնաբանություն տալու համար, հարկավոր է նախ ուշադիր ուսումնասիել թե որտեղերում են տեղի ունեցել ճակատամարտերը: Արձանագրությունում նշված է 5 տեղանուններ՝ Չուզա, Տիգրա, Ուիյամա, Իզալա /Իզիլա կամ Իզիտու/ և Աուտիյարա:

Անդրադառնանք նրանց տեղադրության հարցին. Չուզան համապատասխանում է Չոզանիին, այժմյան Ջեզիրեի մոտ: Տիգրան դա Տիգրիսի և Ջերմ /Կենտրիտես/ գետերի միախառնման վայրում գտնվող Տիլլ ամրությունն է, իսկ Ուիյամայի հարցը մնում է անպարզ, տարբեր պատմաբաններ ունեն տարբեր տեսակետներ և մեծամասնությունը այն տեղադրում է Տիգրայից հյուսիս: Ես գտնում եմ , որ դա համապատասխանում է Թիզլաթալասար 1-ի Մ.Թ.Ա.1115-1077 դեմ դուրս եկած Նաիրյան երկրներից Ուիրամային, որը ըստ իս նույն տեղանվան անվանումն է: Գտնում եմ նաև, որ Ուիյամայի հետ կապ ունի սարգոնի կողմից հիշատակվող Ուայախը Մ.Թ.Ա. 714թ., որը Յ. Մանանդյանը տեղադրում է Բիթլիսի տեղում: Այսպիսով ստացվում է, որ Ուիյամա-Ուիրամա-Ուայախս դա նույն տեղանքի անվանումներն են և նրանք բոլորն էլ հարկավոր է տեղադրել Բիթլիսի տեղում:

Ընդ որում այս ռազմական ճանապարհի ուղին շատ նման է այն ուղուն, որը անցավ Կյուրոսը, երբ մտավ Արմենների թագավորություն: Վերջին երկու ամրությունները կարելի է համարել այլ ռազմական ուղի, որը ես ցույց կտամ, թե ինչու է տեղի ունենում: Այս մի ուղում գործում էր մի այլ՝ արդեն ազգությամբ պարսիկ զորավար՝ Վահումիսան, որը ըստ շատ հայ պատմաբանների անհաջողությունների պատճառով եկել էր փոխարինելու Դադարշիշին: Ինչպես ճիշտ նկատել է Յ.Մանանդյանը, Իզալա բնակավայրը հարկավոր չէ համապատասխանեցնել համանուն սարի՝ Իզալայի հետ , որը գտնվում է Կաշիարի լեռանշղթայից ոչ

հեռու, այլ հարկավոր է տեղակայել Մանևա երկրի մայրաքաղաք Իզիրտույի տեղում, քանզի մինչ այժմ էլ վերջնականապես հայտնի չէ այդ բնակավայրի ճիշտ ընթացանությունը Իզալա թե Իզիտու: Այն գտնվում է Ուրմիա լճից արևմուտք Մեծ Չաբ գետից քիչ հեռու՝ Ռևանդուզից Սերդեշտ տանող ճանապարհի վրա գտնվող Չիրա գյուղաքաղաքի տեղում: Եվ վերջապես Վահումիսայի մյուս ճակատամարտը տեղի է ունենում Արմենիայի Աուտիյարա գավառում՝ պատմական Կորճայք նահանգի Այտվանք գավառ:

Ստացվում է, որ հայերի դեմ դուրս եր եկել երկու բանակ մեկը Դադարշիշի մեկը Վահումիսայի առաջնորդությամբ և ահա թե ինչու: Ուղիղ 60 տարի դրանից առաջ կնքված պայմանագրի համաձայն հայերը /արմենները/ և խալդայները թշնամու դեմ պայքարի էին դուրս եկել միասնական ուժերով ու եթե հիշենք արմենների թագավորության և խալդայների տեղադրությունը ապա ավելի պարզ կդառնա, որ Դադարշիշը հանդես էր գալիս ընդդեմ հայերի/արմենների/, իսկ ահա Վահումիսան դուրս էր եկել խալդայների դեմ: Բայց նրանց միասնական պայքարի բռնվելը դրդել է Դարեհին գրել այնպես, որ իբր նա պայքարել է մեկ երկրի դեմ :Յենց սրանով էլ կարելի է բացատրել նաև այն, որ հայերի առաջնորդի անուն չի նշվում, քանզի կային երկու երկրներ՝ իրար կապող պայմանագրով:

Այսպիսով Դարեհի շնորհիվ մենք իմանում ենք միասնական գործող մի համակարգի մասին, որը պայքարում էր միասնական ուժով ընդդեմ թշնամու և այդ համակարգը ուներ արդեն անվանում՝ Արմիևա հետագայում Արմենիա, որը տարածվում էր նաև Խալդայների վրա՝ այսինքն Վանա լճի արևելքում և որոշ չափով նաև նրանից հյուսիս և հս-արևելք:

Երկուսի միասնական համակարգի մեջ մտնելը և նրանց տարանջատելու փորձը Դարեհի կողմից մեկ անգամ գալիս է ապացուցելու այն, որ արմենները և խալդայները իրար ազգակից էին ընդունում, և Դարեհի համար դա գորեղ ուժ էր: Յենց Դարեհը Յայաստանը բաժանեց այնպես, որ խալդայները գտնվեն մի նահանգում՝ 18-րդ, իսկ արմեններին զցեց 13-րդ նահանգ: Բայց միայն այն, որ այս երկու նահանգները ունեին մեկ անվանում՝ Արմենիա, արդեն նրանց միասնական դարձնող ուժ ուներ և նրանց

համատեղ գործելու հիմքերը արդեն շատ էին խորացել ու բաժանել այն այլև չէր հաջողվի:



*Մերաբրակյան
ասործու քրոնզե
արչանիկ:
Վանի շրջան*



*Վանի
թագավորության
Վարուբանի
դիցուհու
(Խաղի ասործու
կնոջ) քրոնզե
արչանիկը*

Հավելում

Արմենների և խալդայների միավորման խնդրի մասին: Դրա պատճառները և հատկանքները

Մի շարք գիտնականներ կան, որոնք համաձայն չեն այն մտքի հետ, որ խալդայները դա նույն ուրարտացիներն են : Դա այնքանով է հավանական, որ ուրարտացիները հենց այնպես չէին կարող կորել պատմությունից, վերջիվերջո նրանք զարգացած պետություն են ունեցել, իրենց ժամանակին հանդիսացել են տարածաշրջանում ամենազարգացած երկրներից մեկը: Սխալ կլինի ուրարտացիներին միանգամից համարել կորսված ազգ, իսկ նրանց տարածքում բնակվողներին անվանել այլ ազգի ներկայացուցիչներ, քանզի նրանց պետականության կորսյան շրջանից չէր անցել անգամ կես դար: Այնպես որ խալդայները նույն ուրարտացիներն են , միայն այն տարբերությամբ, որ այժմ նրանց անվանում էին իրենց գլխավոր աստծո անունով՝ խալդի աստծո անունով:

Այստեղ ես կանդորադառնամ այն տեղեկություններին, թե կոնկրետ, երբ է սկսվել արմենների ու խալդայների /ուրարտացիների/ միավորումը, նրանց միախառնումը և ամենակարևորը՝ անդրադարձ կանենք նրան, թե երբ են սկսել արմենները տարածվել հայկական լեռնաշխարհով:

Ստրաբոնի վկայություններից մեկի համաձայն խալյուբներն ու խալդայները դա միևնույն ազգի ներկայացուցիչներն են :Մենք խալյուբների տեղակայման երկու ճշգրիտ վայր գիտենք՝ մերձ սևծովյան և Արաքսի երկայնքում ապրողները միջև Արարատյան դաշտ: Նույնիսկ հնում պատմիչները խալդայներին շփոթել են Պարսից ծոցի հյուսիսում, այժմյան Իրաքի հարավային շրջաններում ապրող խալդերի հետ, և այդ շփոթմունքը կա առ այսօր: Խնդիրը բարդանում է նրանով նաև, որ մի տեղ մենք տեսնում ենք <<Արմենիայի մեծագույն մասի ղեկավարի>> սատրապ Երվանդի մոտ ծառայող վարձկան խալդայների, ապա մի այլ նստակյաց խալդայների, դրանից հետո էլ Քսերքսեսի հետ պատերազմի գնացող խալդերի և այլն: Այս ամենը խանգարող հանգամանքներ են վերջնական և ճիշտ եզրահանգման գալու համար:

Քսենոփոնի մոտ նախ «Կյուրոսի Կրթությունում» նշվում է, որ խալդայների մի մասը ապրում են խաղաղ նստակյաց կյանքով, իսկ մյուս մասը թափառականներ են և իրենց ապրուստը հայթհայթում են պատերազմներով, երբեմն էլ ծառայում են տարբեր թագավորների մոտ, որպես վարձկաններ: Քսենոփոնը մի մասում «Անաբասիսի» մեջ նշում է հետևյալը.

<<Արդ՝ Կարդուիսները, Տաոիսները և Խալդայները, թեև նրանք չէին գտնվում թագավորի իշխանության տակ, սակայն, այնուամենայնիվ, նրանց խիստ վտանգավոր լինելու պատճառով՝ համարեցինք մեզ թշնամիներ...>>: Ըստ երևույթին, թափառական Խալդայները անկախ էին, իսկ ահա նստակյաց կյանքով ապրող Խալդայները հպատակ էին: Անդրադառնանք խալդայների և խալյուրների ազգակցության հարցին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արաքս գետի մոտ ապրող խալյուրների տարածքը մի ժամանակ եղել է Խալդայ-ուրարտացիների հսկայածավալ տերության մասը սկսած Մ.թ.Ա. 800-ականներից մինչև նրանց անկումը ընդունված Մ.թ.Ա. 590-585թ.թ. ապա կարելի է ընդունել նաև նրանց ազգակցական լինելու հանգամանքը: Եվ եթե Խալդ և Խալյուր ցեղանունները համարժեք են, ապա հետաքրքրական է Պլինիոսի վկայությունը.

<<Թասիեի և Տրիարեի երկիրը, տարածվում էր մինչև Պարիադրեսյան լեռները, սրանց վերևում էին Կողքիսի ամառի տեղերը, որոնց կողքին, Կերավնյան լեռների դիմաց, ապրում են արմենոխալյուրները>>:

Նախ մինչև նրանց ցեղանվան առանձնահատկությունների հետ կապված խնդրին անդրադառնալը, որոշենք նրանց բնակության վայրը: Պարիադրեսյան լեռների տեղը որոշակիորեն պարզ է Պտղոմեոսի քարտեզից, քանզի այնտեղ ցույց է տրվում, որ այդ լեռներից սկիզբ են առնում Եփրատն ու Արաքսը, այսինքն դա Սերմանց լեռներն են, սակայն ինձ հետաքրքրեց Պարիադրեսյան լեռների անվանման առաջին մասը՝ Պարի, որը, հավանաբար, հենց Հայկական պարի «պար» բառն է: Հայոց մեջ Հայկական պարին անվանել են նաև Ջրաբաշխ լեռներ:

Մեզ հետաքրքրող տեղանքը գտնելու համար լավ ուղեցույց կարող է ծառայել այն, որ Պլինիոսը նշում է, թե նրանք ապրում էին

Կողքիսի մոտ գտնվող լեռների դիմաց, այսինքն պատմական Գուգարքի արևմտյան մասերում: Սակայն մինչ այս մենք երբեք չենք ունեցել վկայություններ խալդայ-խալյուբերի կամ էլ արմենների այստեղ բնակված լինելու մասին: Գրեթե հաստատուն կարող ենք ասել, որ այստեղ սկսած Մ.Թ.Ա. 8-րդ դարից բնակեցվել է տարբեր սկյութական ցեղեր: Չնարավոր է, որ խալդայները այստեղ հայտնել են Ուրարտական պետության այս տարծքները գրավելու և նրա սահմանների ծավալման հետևանքով՝ յուրացնելով Արարատյան դաշտավայրի բարեբեր հողերը: Իսկ ահա արմենները կարող են որոշակիորեն կապ ունենալ Յերոդոտոսի մոտ հիշատակվող Ալարոդների հետ, որոնք հիշատակվում են մատիներից և սասպեյրներից հետո: Սասպեյրների <<արեալը>> տեղակայել ճշգրիտ շատ բարդ է, սակայն նրանց անվան մի մասը մնացել է աշխարհագրական անվանումների մեջ, ինչպես օրինակ Սպեր գավառի: Նրանք ապրում էին հավանաբար նաև ներկայիս ՅՅ-ի տարածքում միջև Ուրմիա լիճ: Սասպեյրների հետ կապ ունեն այդ թվում հեսպերիտները, որոնք հանդես են գալիս որպես Չայաստանի սատրապ՝ Տիրիբագոսի իշխանության տակ ապրող ժողովուրդ: Մեկ այլոց՝ Փասիաններին, կարելի է տեղադրել Արաքս /հնում նաև Փասիս/ գետի աղբյուրներից ոչ հեռու, Սերմանց լեռների մոտ, հավանական է նաև Բասենի տարածքում: Ըստ երևույթին դուրս է գալիս, որ Ալարոդները բնակվել են Արածանիի և Արաքսի միջև: Չարկ է նշել, որ ինչպես նկատել են <<Ուրարտու-Չայաստան>> գրքի հեղինակները՝ Յերոդոտոսը օգտվել է արամեերեն բնագրերից, որտեղ գրվում է/rrt/ և կարելի էր ընթերցել և Արարատ, և Արարոտ, և թե Ալարոդ, ինչպես արել է Յերոդոտոսը:

Ալարոդների արմեններ լինելը վկայում է նաև հետևյալը հատվածի մեկնաբանությունը Զսենոփոնի <<Անաբասիսից>>: Մի տեղ Զսենոփոնը նշում է, որ հունական բանակը Եփրատը՝ ակունքներից ոչ այդքան հեռու /Արածանիի մասին է խոսքը/ անցնում է գետը, հասնում մի գյուղի, որի բնակիչները արմեններ էին, իսկ այդ սատրապությունը կոչվում էր Արևմտյան Արմենիա: Եվ ինչպես հիշում եք մենք հենց այս տեղում տեղակայեցինք Ալարոդներին: Այսինքն արմենների ինչ ոչ մի հատված բնակվում էր այստեղ, և ըստ իս, մեկ գյուղի առկայությունը բավական է դա պնդելու համար:

Այս ամբողջ հատվածը մեզ բերեց այն համուզման, որ հիշատակվող արմենոխալյուբները դա նույն ալարող-խալդայներն են՝ ապրող իրար հետ շատ սերտ կապերի մեջ, եթե ոչ ավելի: Դուրս է գալիս, որ արմենների և ուրարտացիների միաձուլումը կամ միախառնումը երկար ժամանակ է տևացել ու կրել է տեղ-տեղ խաղաղ, տեղ-տեղ էլ պայքարի արդյունում կնքված հաշտության և արդեն համատեղ պայքարի արդյունք:

Այս ամենից բխող մյուս հարցը, դա այն է թե երբվանից են սկսել արմենները տարածվել դեպի հյուսիս և հյուսիս-արևելք, և ինչ պատճառներով: Պատճառները ասելու համար մեզ հարկավոր են ավելի շատ աղբյուրներ, քանզի եղածի վրա հիմնվելով անհնար է տալ գոնե մոտավոր պատասխան. դա ինչ-որ չափով նաև անշինորհակալ գործ է ստանձնել պարտավորություն ասել այն, ինչ դժվար կլինի ասել նույնիսկ աղբյուրների բավարարության դեպքում: Նույնը վերաբերում է նաև ժամակագրությանը, քանզի դա բխում է պատճառներից: Կարելի է ասել միայն այն, որ դա ուրիշ ազգերի հայտնվելու արդյունք կարող է հանդիսանալ, որոնք ստիպել են արմեններին տեղափոխվել բնակության այլ տեղեր:

Եվս մի հետաքրքիր նրբություն կա արմենների այս տեղում հայտնվելու մեջ: Ինչպես կհիշեք մյուս գլուխներից, ես Սուբրիային անվանում էի Արարատյան թագավորություն, և, միաժամանակ, հետագայում ձևավորված Արմենների թագավորությունը ևս գտնվել է Սուբրիայի տեղում: Եվ ահա ստացվում է, որ Արարատյան թագավորության բնակիչները տեղափոխվելով դեպի հյուսիս-արևելք որոշակի պատճառներով, իրենց նոր բնակավայրի /տարածքի/ անունը կնքեցին Այրարատ /ինչպես գիտեք ալարողների բնակության տարածքը գտնվում է պատմական Յայաստանի Այրարատ նահանգի մեջ/ ինչպես կոչվում էր իրենց նախկին օրրանը՝ Արարատյան Թագավորությունը՝ Սուբրիան, իսկ ահա ամենաբարձր գագաթին օժեցին նույն ԱՐԱՐԱՏ անվանք՝ ինչպես Կորդվաց Արարադը⁵:

8 Ամենահետաքրքրականը այն է, որ ինչպես նշված է վերևում սուբրիացիները ծագում էին խուրրիներից և նրանց գլխավոր աստվածը Թեշուբն էր: Եվ ահա, Թեշուբի հետ կապված կա մի պատում, ըստ որի նա պայքարում էր իր եղբոր՝ Ուլիկումիի հետ, որը պատկերվում էր քարի մեծ կտորների, կամ ժայռերի տեսքով: Եվ արդյունքում Թեշուբին հաջողվում է հաղթել եղբորը: Այդ պատճառով Թեշուբին շատ հաճախ պատկերում էին կանգնած երկու գագաթ ունեցող սարի վրա: Իսկ Արարատը ունի երկու գագաթ, այնպես ինչպես պատկերացնում էին խուրրիները: Սա տալիս է նաև այսպիսի բացատրություն....

Բովանդակություն

Նախաբան.....	3
Ընդհանուր փաստեր վերաբերող Հայաստանի արևմտահարավային շրջաններին Մ.Թ.Ա 13-9 դ.դ.ներին.....	4
Թիգլաթպալասար 3-րդը և նրա արշավանքը դեպի Ուրարտու և Սուբրիա.....	9
Սուբրիան մինչև Ասուրիադոնի գահակալումը ու Մ.Թ.Ա. 673թ.ի արշավանքը.....	11
Ասուրիադոնի արշավանքը Մ.Թ.Ա. 673թ.ին և վերջին տեղեկությունները Սուբրիայի մասին.....	14
Երվանդունիների դինաստիա.....	25
Արմենների և Խալդայների տարածքը, նրանց միջև ընթացող պայքարը, նրանց միացումը իրար.....	27
Մ.Թ.Ա.521-520 թ.թ. ապստամբությունը և արմենների ու Խալդայների միասնական պայքարը.....	31
Արմենների և Խալդայների միավորման խնդրի մասին: Դրա պատճառները և հատկանքները.....	34